եւ ևիկ երեւեցի դոյզն ինչ չարժումն ի վերայ միոյ ի նոցանէ և կամ ի վերայ միոյ ազգի իւրեանց հակառակ դրելոցս այսոցիկ, տուժեսցին : Եւ այսպէս ասքս երեքեանս, որոց անուանքն գրեցան ի վեր անդր, մինն ի ներքոյ դատակնքոյս, և յանձն արարին զԻողզոխտայն և զպահապանն եպիսկոպոսին Հայոց՝ առաջի վրաց, յանձնումն ամենայն կատարեալ օրինօք և դատաստանաւ, հաճութեամբ և հաւանութեամբ, ՌՀՀ (1434) :

Վկայք : Օմար պն Խալիլ : Ալի պն Մեհմադ : Ճոճա պն Խալիլ :

Թէպէտ և վերջին հրովարտակն Մարտիրոսի չերեւի ի միջի, որպէս գրեցաք · սակայն ամենայն իսկաստ նորին հանդերձ թուականաւն · բովանդակեալ է ի դատաստանագրի աստ ըստ գրեցաք անթերի :

Թէպէտ և փոքր ինչ ուրախացան Հայք ի վերայ ազատութեան վիճակի իւրեանց մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ Մարտիրոս Պատրիարքի · այլ այս ուրախութիւն նոցա չեղեւ տեւական · զի իբրեւ լուաւ Թագաւորն վրաց թէ Հայք վերստին դարձուցին յինքեանս զԻողզոխտայն, առաքեաց առ Սուլթանն զարս հաւատարիմս մեծամեծ պատարագօք և ծանրագին ընծայիւք, և դարձեալ եհան զայն ի ձեռաց Հայոց · ի վիշտ և ի տագնապ բովանդակ միաբանից եւ նոյն իսկ Մարտիրոսի, զմտաւ ածեալ զայնչափ աշխատութիւնս եւ զնեղութիւնս զոր կրեաց ի ծերութեան իւրում, եւ զանբաւ ծախսս դրամոց, և զձախորդ պատահումն գործոյն · այլ զի մի խոպառ անմխիթար թողցէ զիւրան, և բամբասեացի առ յապա ժամանակի իբրեւ հեղգ ի պաշտպանութիւն ազգային իրաւանց, յանձն առ զվիշտս ճանապարհի և զայլոց, և դարձեալ չոքաւ յեդիպտոս : (Թէպէտ Հաննա վարդապետ զերթալն նորա հնդիցս անգամ ասէ ) · և յանդիման լեալ Սուլթանին, այն է Ալտու Սայիտ Զագմագ · եւ նախաբարեաց նորա, ասէ՝ զի՞նչ իցէ այս , զի երիցս անգամ առիք չինէն զերիս հազար Ցլորիս , և դարձուցիք առ իս զսեփհական վիճակն իմ, և այժմ դարձեալ զրկեցիք զիս անտի եւ առաւք այլոց, եւ խաղ արարիք զիս ի ծերութեան իմում առաջի օտարաց և իմոց իսկ : Իսկ իշխանքն որք բարեկամք էին , յորդոր եղեն նմա և ասեն , դու գոլով այր մի առաւ-